

Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի ելույթը «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի փակման կոնֆերանսին

28.04.2016թ.

Համաժողովի հարգելի մասնակիցներ, սիրելի տիկնայք

Սիրով ուզում եմ ողջունել բոլոր ներկաներին և առաջ անցնելով՝ նշել, որ ինձ համար չափազանց հաճելի միջավայրում եմ գտնվում: Նախ և առաջ այն պատճառով, որ «Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան» ինձ համար հոգեհարազատ կազմակերպություն է դարձել, քանի որ վերջինիս ցանկացած նախաձեռնություն միմիայն դրական արդյունք է ունենում՝ ի շահ մեր համայնքների զարգացման: Կառույցը խթանում է կանանց ձեռնբերությունը, ինչը ևս դրական երաշխիք է, որ նախաձեռնությունը հաջող ընթացք և առավել հաջող ավարտ կունենա, քանի որ իմ խորին համոզմամբ՝ լոռեցի կանայք իրենց վստահված ցանկացած գործ պատվով ու ամենայն պատասխանատվությամբ են կյանքի կոչում: Երեք տարի առաջ, երբ «Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան» Եվրամիության աջակցությամբ նախապատրաստվում էր մեկնարկելու «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում» ծրագիրը՝ մենք պատրաստակամ ընդունեցինք գործընկեր լինելու նրանց ողջունելի առաջարկը: Այժմ ծրագիրն իր տրամաբանական ավարտին է մոտեցել: Այսօր թե՛ կառույցը, թե՛ մենք ամփոփում ենք արդյունքները և պետք է շնորհակալությամբ փաստեմ, որ արդյունքները գերազանցում են սպասելիքները:

Ծրագրի մուտքն այնպիսի համայնքներ, ինչպիսիք են Քարինջ, Շնող, Տաշիր, Օձուն և այլն, Տեղական տնտեսական զարգացման մոդելների մշակումը Մարց, Լորուտ Շամուտ, Ծաղկաշատ և այլ հեռավոր համայնքներում միմիայն գովեստի ու դրվատանքի արժանի աշխատանք է: «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացումը» մարզում իրականացվող այն եզակի ծրագրերից է, որի արդյունքներն ականառու ու շոշափելի են, դրանք նպաստում են համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի շարունակական բարելավմանը: Պետք է շնորհակալությամբ փաստեմ նաև, որ մարզի համայնքներն իրենց քառամյա զարգացման ծրագրերի կազմման ժամանակ օգտվել են ծրագրի շրջանակներում մշակված Տեղական տնտեսական զարգացման մոդելներից, ինչը ևս կարևոր է:

Ամփոփելով խոսքս՝ ուզում եմ ևս մեկ անգամ շնորհակալություն հայտնել կազմակերպությանը՝ ի դեմս նախագահ Լիլիթ Ասատրյանի ու ողջ աշխատակազմի և ասել՝ ձեր ծրագրերը մեծապես օժանդակում են մեր համայնքների հզորացմանը՝ կանանց անսպառ ներուժն օգտագործելով այդ նպատակին: Ողջունում եմ և բարի երթե եմ մաղթում նաև այլ ձեռնարկումներում և ուզում եմ վստահեցնել, որ Լոռու մարզպետարանը պատրաստ է մշտապես աջակցել ձեզ՝ կյանքի կոչելու ցանկացած ողջունելի նախաձեռնություն: Ուզում եմ իմ երախտագիտությունը հայտնել նաև

Եվրամիությանը՝ ծրագրի իրականացմանը ֆինանսական աջակցություն
ցուցաբերելու համար և հույս հայտնել, որ համագործակցությունը կշարունակվի՝ ի
շահ մեր համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման: